11-րդ շաբաթ

Թեմա՝ «Խաղեր և սպորտաձևեր»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 որպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Ո՞րն է խաղի և սպորտաձևի միջև տարբերությունը:
2. Որո՞նք են ձեր մանկության խաղերը:
3. Ո՞րն էր ձեր ամենասիրելի խաղը: Ինչու՞:
4. Փոխվե՞լ են արդյոք խաղերը ձեր մանկությունից մինչ օրս:

5. Որո՞նք են ձեր երկրում տարածված սպորտաձևերը:
6. Ովքե՞ր են ձեր երկրի ամենահայտնի մարզիկները:
7. Ո՞րն է ձեր ամենասիրելի սպորտաձևը: Ինչու՞:
8. Ի՞նչ սպորտով եք զբաղվում դուք: Ինչու:

9. Ո՞վ է ձեր ամենասիրելի մարզիկը:
10. Ի՞նչ դեր ունի սպորտը ձեր կյանքում:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

հանրապետություն	տարածք
լեռներ	ազգեր
լճեր	թանգարաններ
գետեր	փողոցներ
ձորեր	մշակույթ
վանքեր	արվեստ
բերդեր	արդյունաբերություն
խաչքարեր	տնտեսություն

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

Բնագրի նմուշ՝

Շախմատի եռակի օլիմպիական չեմպիոն, աշխարհի նախկին գավաթակիր գրոսմայստեր Լեւոն Արոնյանը «Ռադիո Ռոսսիի» ռադիոկայանին տված հարցազրույցում, մասնավորապես, ասել է, որ չի սիրում շախմատով զբաղվել երեկոյան ժամերին, շատ է սիրում մարզվել առավոտները: Այս մասին տեղեկացնում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով «Ռադիո Ռոսսիի» ռադիոկայանը:

«Ես ինձ լավ չեմ զգում, եթե գիշերը շախմատային երազներ եմ տեսնում, ուստի փորձում եմ երեկոյան ժամերին կամ ֆիլմեր դիտել, կամ գրքեր կարդալ»,- ասել է Արոնյանը:

Նա նշել է, որ միջազգային մրցումներին միշտ իր շուրջն են 3-4 մտերիմ մարդիկ, իսկ եթե դա բացառիկ կարեւոր մրցաշար է, ապա եւ ավելի մեծաթիվ: Արոնյանն ասել է, որ Հայաստանն ունի իր վստահելի թիմը, «եւ կարիք չկա այս թիմից որեւէ մեկին փոխել, քանզի թիմի անդամների միջեւ ստեղծված համագործակցությունը միշտ դրական արդյունք է տվել»:

Արոնյանն ասել է, որ ինքը սիրում է խաղալ ֆուտբոլ, բասկետբոլ, թենիս, դիտել ամերիկյան բասկետբոլի լիգայի մրցամարտերը, նաեւ նշել, որ հակում չունի դեպի քաղաքականություն:

Միաժամանակ նաեւ շախմատի եռակի օլիմպիական չեմպիոնը խոստովանել է, որ նախընտրում է խաղալ ուժեղ մրցակիցների հետ, քանի որ այս դեպքում գեղեցիկ եւ տպավորիչ պարտիաներ, իսկական շախմատային արվեստ է ծնվում:

«Շախմատը՝ այս հնավուրց եւ գեղեցիկ խաղը, մշակույթի լավագույն խորհրդանիշն է»,-հավելել է նա:

Աղբյուր՝ https://armenpress.am/arm/news/693264.html